ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «12» «փետրվարի» 2018թ.
ժամը 10 ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)**	Ա.Առաքելյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Ա.Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Ա.Հայրապետյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Գ.Ասատրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Ս.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)**	Թ.Հայրապետյան

1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ա.Առաքելյան)

1.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018թվականի փետրվարի 12-ին, ժամը 10:00-ին, «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի փետրվարի 28-ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Արվատեկ», «Սմարթլայն» և «Էն Գրուպ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա.Առաքելյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի Հավելված N 6-ով նախատեսված գրությունները, առաջարկվող ապրանքների ամբողջ նկարագիրը՝ համաձայն հավելված N6.1-ի՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ ընկերության meteo@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

3.2. Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Առաքելյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Էն Գրուպ» ՍՊԸ-ին.**

4.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 4-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, և 20-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Սմարթլայն» ՍՊԸ-ին.**

4.3. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, և 19-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Արվատեկ» ՍՊԸ-ին.**

4.4. Պայմանագրի կնքման նպատակով «ՋԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.5. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.6. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ա.Առաքելյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Մուրադյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Հայրապետյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Գ.Ասատրյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Ս.Գրիգորյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Թ.Հայրապետյան